ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի   Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 103

______________ № ______________

Ձեր № ______________________

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ԾԻԳ ՊԵՏԱԿԱՆ
ՀԻՄՆԱՐԿԻ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Եղիազարյան

Ս.թ. դեկտեմբերի 17-ի Ձեր թիվ 37/37.2/21340-14 գրությամբ ներկայացված՝ «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 22-ի թիվ 386-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 14-ի թիվ 484-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշումների նախագծերի և «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2011 թվականի փետրվարի 11-ի թիվ 50-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2009 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 3660-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին», «ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2014 թվականի հունվարի 22-ի թիվ 18-Ն հրամանում

փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Հարկային մարմնի մի շարք հրամաններ ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի հրամանների նախագծերի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

1) անհասկանալի է նախագծի 6-րդ հոդվածով կատարվող լրացման նպատակը, եթե հաստատագրված վճարի ամսական չափի որոշման ընթացակարգերը հստակ սահմանված են առանձին հոդվածներով,

2) անհասկանալի է, թե ինչպես և ում կողմից են հաշվարկվելու հաստատագրված վճարի գծով հարկային պարտավորությունները կամ կիրառվելու հաստատագրված վճարի գծով պատասխանատվության միջոցները նախագծով ներկայացված՝ ելակետային տվյալի և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարությունը մեկ անգամ ներկայացնելու և հետագայում այդ տվյալների հիման վրա հաստատագրված վճարի հաշվարկման կարգի ներդրման արդյունքում: Մասնավորապես, պարզ չէ, թե ինչպես և ում կողմից է հաշվարկվելու հաստատագրված վճարը, օրինակ, այն դեպքում, երբ հարկ վճարողը ելակտային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարություն ներկայացնելուց հետո չի ներկայացնում գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու մասին հայտարարություն և միաժամանակ չի կատարում հաստատագրված վճարի գծով հարկային պարտավորությունները:

Նշյալ նկատառումը ՀՀ կառավարության աշխատակազմի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ԾԻԳ-ի կողմից չի ընդունվել, իսկ որպես այն չընդունելու հիմնավորում ամփոփաթերթում նշված է այն, որ եթե ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնողները և տոտալիզատորի, ինտերնետ տոտալիզատորի կազմակերպիչները ելակետային տվյալների կամ ուղղիչ գործակիցների փոփոխությունների վերաբերյալ հայտարարություն, ինչպես նաև գործունեության դադարեցման մասին դիմում չեն ներկայացնում, ապա յուրաքանչյուր ամսվա հաստատագրված վճարի հաշվարկման համար հիմք են ընդունվում վերջին հայտարարությամբ ներկայացված ելակետային տվյալները ու ուղղիչ գործակիցները: Այդ կապակցությամբ հայտնում ենք, որ նախագծով հստակեցված չեն ոչ թե ելակետային տվյալների կամ ուղղիչ գործակիցների փոփոխությունների վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու, կամ գործունեության դադարեցման մասին դիմում չներկայացնելու դեպքերում ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների հետ կապված հարցերը, այլ հստակեցված չեն այն հարցերը, թե խնդրո առարկա դեպքերում ով և ինչ ընթացակարգով է հաշվարկելու հաստատագրված վճարը: Մասնավորապես, պարզ չէ, արդյոք

այդ դեպքերում հաստատագրված վճարը պետք է հաշվարկվի հարկային մարմնի կողմից, թե ոչ, եթե այո, ապա պարզ չէ, թե հարկային մարմինը ինչպես է հաշվարկելու այդ պարտավորությունները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք նախագծում ներառել միայն այն դրույթները, որոնցով վերացվում են «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքում նախկինում կատարված փոփոխությունների արդյունքում առաջացած տեխնիկական թերությունները, իսկ այն դրույթները, որոնցով նախատեսվում է վերանայել հաստատագրված վճարի հաշվարկման և վճարման ներկայումս գործող ընթացակարգերը, հանել նախագծից:

Միաժամանակ, ներկայացնում ենք «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ եզրակացությունը՝ կազմված ՀՀ կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 10-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» թիվ 1021-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն:

Առդիր՝ 1 թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝



Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ

Կատ.՝ Եկամուտների քաղաքականության բաժին
Հեռ.՝ 060 700 328

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

«Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվում է սահմանել, որ՝

1) «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնողները և տոտալիզատորի, ինտերնետ տոտալիզատորի կազմակերպիչները հաստատագրված վճարը հաշվարկում և վճարում են նույն օրենքով սահմանված ամսական չափով՝ անկախ տվյալ ամսվա ընթացքում գործունեության իրականացման փաստացի օրերի քանակից,

2) գործունեության ժամանակավոր դադարեցման դեպքում հարկային մարմնին գործունեության ժամանակավոր դադարեցման վերաբերյալ դիմում-հայտարարություն են ներկայացնում միայն ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնողները և տոտալիզատորի, ինտերնետ տոտալիզատորի կազմակերպիչները,

3) ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարությունը հաստատագրված վճար վճարողների կողմից (բացառությամբ՝ խաղարկությունով և ոչ խաղարկությունով, ինչպես նաև համակցված վիճակախաղեր իրականացնողների) պարտադիր ներկայացվում է ոչ թե հունիս և դեկտեմբեր ամիսների ընթացքում, այլ գործունեությունը սկսելուց և նշյալ տվյալներում փոփոխություններ կատարվելու դեպքերում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախագծի ընդունման արդյունքում կնվազի հաստատագրված վճարով հարկվող գործունեության տեսակների նկատմամբ իրականացվող վարչարարության արդյունավետությունը՝ գտնում ենք, որ նախագծի ընդունման ազդեցությունը պետական բյուջեի եկամուտների վրա կարող է լինել բացասական, իսկ համայնքների բյուջեների եկամուտների, ինչպես նաև պետական և համայնքների բյուջեների ծախսերի վրա կլինի չեզոք: